



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հունվարի 2020 թվականի N 18 -Ա

**«ՔԱԶԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ
26-Ի N 15-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 125-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասով, 67-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «ը» ենթակետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման 8-րդ հավելվածի «Կապանի տարածաշրջան» բաժնի 9-րդ կետը՝

որոշում եմ.

1. «Քաջարանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 88140000 (ութսունութ միլիոն հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ կազմող կանոնադրական կապիտալը նվազեցնել 65540000 (վաթսուն հինգ միլիոն հինգ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամով՝ բաժնետոմսերի մարման միջոցով: Նվազեցումից հետո կանոնադրական կապիտալը սահմանել 22600000 (քսաներկու միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Հաստատել կանոնադրության փոփոխությունը և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2005 թվականի հունվարի 26-ի N 15-Ա որոշմամբ հաստատված «Քաջարանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 22600000 (քսաներկու միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, որը կազմում է 50 (հիսուն) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 452000 (չորս հարյուր հիսուներկու հազար) ՀՀ դրամ:

Ընկերության բոլոր 50 (հիսուն) սովորական բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են»:

3. Հանձնարարել «Քաջարանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ ապահովել կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2019 թվականի դեկտեմբերի 17-ի N 125-Ա որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՅՐԱՏՈՒՄԻ ՄԱՐԶՊԵՏ



X


ՀՈՒՆԱՆ ՊՈՒՆՅԱՆ

Подписано РОГНОСТЯН, СУМЯН 4005640117

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

2020թ. հունվարի 21
ք. Կապան

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզպետի 2020 թվականի
հունվարի 21-ի N 18 - Ա որոշմամբ
«ՀՀ Սյունիքի մարզպետ»



Կազմված է 21.01.2020թ. և բաղկացած է 1 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ

ՕՐԻՆԱԿ - - -

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿՈՂՄԻՑ 05.03.2005թ.

Գրանցման թիվ- 222.120.00469

Վկայական 03Ա 068065

ՀՎՀՀ 09417527

05.03.2005թ. գրանցված կանոնադրության
Թիվ - - - - փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի տարածքային բաժնի կողմից

« » ----- 2020թ.

«ՔԱՋԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
/ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ/

1. «ՔԱՋԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ » փակ բաժնետիրական ընկերության
կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1). Ընկերության կանոնադրության 4.1 կետի 1-ին պարբերությունը կարդալ հետևյալ նոր
խմբագրությամբ.

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 22600000 (քսաներկու միլիոն վեց
հարյուր հազար) ՀՀ դրամ, որը կազմում է 50 (հիսուն) հատ հասարակ (սովորական)
անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 452000 (չորս
հարյուր հիսուներկու հազար) ՀՀ դրամ:

Ընկերության բոլոր 50 (հիսուն) սովորական բաժնետոմսերը տեղաբաշխված են,
սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ
վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են:

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է «ՔԱՋԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ
բաժնետիրական ընկերության կանոնադրության (գրանցված 05.03.2005թ.) բաղկացուցիչ
մասը: